ցում են ոսկեզօծուած պնակների մէջ, փղոսկրէ դգալով, ու չգիտես, ուտես թէ՞ նայես:

Բառը հնչում է, սիրուն ժպիտով կանգ առնում եւ, լաւագոյն պարուհիների նման, ոտքի մատների վրայ պտոյտ գալիս, նորից պտոյտ գալիս, եւ բարեւում: Ածականների երամը աննշմար կերպով ներս է մտնում ու բեմի ներքնախորը, արհեստական, գոյնզգոյն լոյսերի տակ հազար ձեւեր առնում:

Ջուլթակների թաւշեայ ճպոտների տակ հառաչում են, մինչ սրինգները մելանոյշ երգեր են երգում:

Վերը, կովկասցի հանդիսականներ, նայում եւ սուր ակռաներով բայերը պատռտում վայրի խնձորի նման:

* * *

Ռուս փախստականները արշաւել են Պոլիս, ոճաւորել Պերան եւ ամէն բանի վրայ ուրոյն կնիք դրել:

Պատմութիւնը ի՜նչ տարօրինակ խաղեր է խաղում: Ռուսերը դարերով յաղթական մուտքի են սպասել, Այա Սոֆիայի խաչի առասպելն են ստեղծել եւ ամբողջ մի փիլիսոփայութիւն, մի տեսակ համատիեզերական աշխարհահայեացք՝ սուրբ դրքի, վօդկայի, մտրակի եւ ճնշաւորութեան մի իդէալ:

Այսօր, եկել են, բարոյալքուած բանակի այդ բեկորները, ընկել են փողոցէ փողոց, ծախում են լրագիր եւ լուցկի, ժպիտ եւ պար, նուրբ երաժշտութիւն եւ կին:

Լաւ են զգում իրենց, մանաւանդ մզկիթների շուրջը, թրքաց թաղերի բանտուած հարեմների ստուերների տակ, աժան եւ ստորին զուարճութիւններ մատուցող կասկածելի վայրերում:

Կանայք իրենց մսերի մէջ թրթռուն հեշտանք են զնում, բարեկիրթ շուայտութիւն, զեղագիտական պոռնկութիւն: Թուրք կանանց ձեւերն են առնում, բաղնիքների աւազանների շուրջ պտտող մերկութիւնների եւ կիսամութ սենեակների դաւաճան նուաղումների հրապոյր են մատուցում: Աժան:

Մարդկանց մէջ բնածին թուլութիւնը, որ իրենք բարութիւն են անուանում, լճի վրայ թափուած իւղի պէս տարածւում է, կպչում մարմիններին, փոշու եւ աղրի բոյն դառնում:

Ռուս հոգեբանութիւնը ինչքա՜ն մակերեսային է: Ինչքան խեղճ են եւ անհատակութիւնից զուրկ: Մշակոյթների փրփուրը վայրենի շըրթունքների վրայ: Համեմներով խեղաթիւրուած մի տեսակ սոխի ապուր՝ աղիքները այրող եւ անմարսելի:

Խանութպան էին անուանում մեզ, արհամարհում էին, վիրաւորում, իսկ այսօր իրենք, Պոլսից մինչեւ Փարիզ, էլ ինչե՞ր չեն ծախում: Հոգի, մարմին, գողացած իրեղէններ եւ խիղճ:

Պէտք է սահման քաշել մեր եւ իրենց մէջ: Նրանց երեւութական քաղաքակրթական մըտայնութիւնից պէտք է պաշտպանուել:

Հայը գերազանցապէս հակառուս է:

* * *

Երեկոյեան, վերադարձին, հիւրեր գտայ տանը: Երկու երիտասարդներ, որ Կովկասից են գալիս: Մէկը ասում է նկարիչ է, միւսը՝ բանաստեղծ:

Նկարիչը առատ է իր ճառերի մէջ, բանաստեղծը բացականչութիւններով է պատասխանում: Հարց ու փորձ եմ անում Հայաստանի մասին, շատ բան են ասում, բայց չեմ կարողանում կացութիւնը պարզել: Սիբիլլական մի նոր լեզու են բանեցնում, մեզ համար անհասկանալի:

Դա էլ նոր երեւոյթ է, նոր մի հոգեբանութիւն յեղափոխութիւնից առաջացած:

Նկարիչը — Թիֆլիսեցու ճկունութեամբ — պատմում է, որ արտասահման գնալու համար եւրոպացիները մեծ դժուարութիւններ են անում, սակայն, իրեն ասել են մի միջոց, եթէ կաթոլիկութիւն ընդունի, մխիթարները դործը կը սարքեն:

— Ուստի ի՞նչ էր մտադիր անելու,—հարցրի:

— Ինչ կայ որ, կ՝ընդունիմ:

Այսօրուայ երիտասարդները ամէն բան ընդունում են, եւ ոչ մի բանի չեն հաւատում:

Ցոյց տուեց իր գծագրութիւնները: Նմանողութիւններ Լիոնարդօ տա Վինչիին, բաց նամակներից առած ընդօրինակութիւններ:

Խեղճութի՛ւն:

* * *

Պէտք է Հայաստան գնալ:

Ինչքա՜ն հեռաւոր է թւում նա եւ ինչ անհասկանալի: Մեր եւ նրա միջեւ բոցերում ճարճատող Փոքր Ասիան, հակառակորդ բանակ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան